

**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԶՏՄ-ՊԾԳՀ- ԾՁԲ-2020/5**

ք. Երևան

«18» դեկտեմբեր 2020 թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը» ի դեմս **հիմնադրամի Զրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի տնօրեն Մ. Գասպարյանի** (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Արմինե Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **առողջության ապահովագրման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և N 4-ի դրույթների պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի **N 1 և N 4 հավելվածներով** սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3

Ապահովագրվածանձանցցուցակը՝ Ապահովագրության համարանիրաժեշտովյալներով սահմանված է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված **N 5**-ով: Ապահովագրված անձանց թիվը Պայմանագրի կնքման պահին կազմում է **42** մարդ:

1.4 Ապահովագրված անձանց ցուցակում փոփոխությունների դեպքում (աշխատանքից ազատում կամ ընդունում) ապահովագրավճարը հաշվարկվում է համամասնորեն Ապահովագրի կողմից տրված հայտարարագրերի հիման վրա: Ապահովագրված անձանց ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել յուրաքանչյուր **ամսվա 1-ին, 10-ին և 20-ին**, ինչի մասին Ապահովագիրը նշված օրերից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տեղեկացնում է Ապահովագրողին՝ սահմանված հայտարարագիրը ուղարկելով - էլեկտրոնային հասցեին:

1.5 Ապահովագրողը, Ապահովագրության պայմանագրին կից, Ապահովագրին տրամադրում է ապահովագրական վկայագիր, որի պայմանները պետք է համապատասխանեն Պայմանագրի պայմաններին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան առաջարկներ, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ համապատասխան գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա տնային, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է **120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:** **100,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ,** մեկ անձի համար կազմում է **120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և Հ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ Դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման արձանագրույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին, հանձման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1.1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին համապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չվճարված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Կողմերը պարտավորվում են սույն պայմանագրի կատարման շրջանակներում չիրապարակել գաղտնիք պարունակող տեղեկատվությունները:

¹ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

7.2 Սույն պայմանագիրը և նրան կցվող հավելվածները կարող են ներկայացվել միայն պաշտոնական մարմինների ներկայացուցիչներին, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն իրավունք ունեն վերահսկել և ստուգել կողմերի գործունեությունը:

7.3 Սույն պայմանագրով գաղտնի են ճանաչվում հետևյալ տեղեկությունները պայմանագրի բովանդակությունը և ձևը, ապահովագրված անձանց առողջական վիճակը:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 1.2, N 3 N 3.1, N 4, N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.14 Սույն պայմանագրին կատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի
իրականացման մասնաճյուղ»
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900000902255

Կենտրոնական գանձապետարան

Տնօրեն

Մամիկոն Գասպարյան



ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 Ա 5

ՀՎՀՀ՝ 02551341

Հ/Հ՝ 163008157113

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ

Գործադիր տնօրեն

Արմինե Մելքոնյան



Հավելված
«18» դեկտեմբեր 2020 թ. կնքված
ՋՏՄ-ՊԾԳՀ-ԾՁԲ-2020/5 ծածկագրով պայմանագրով

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

Ծառայություն									
հրավերով նախատեսված ածխաբաժնի համարը	գնումների պանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատակարարման	
								հասցեն	Ժամկետը*
1	66511120/2	Առողջության ապահովագրման ծառայություններ	համաձայն կցված հավելվածի 1,1-ի:	դրամ	6,000,000	6,000,000	1	ՀՀ, ք. Երևան, Վարդան անց փակուրդի 8, 5րդ հարկ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի ժամկետով:

ՀՀ դրամ

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել փնել, քան 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ

Հայաստանի տարածքային զարգացման
իմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի
իրականացման մասնաճյուղ»

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուրդի 8
ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900000902255

Կենտրոնական գանձապետարան



ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5
ՀՎՀՀ՝ 02551341

Հ/Հ՝ 163008157113

ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԿՓԲԸ

Գործադիր տնօրեն

Արմինե Մելքոնյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Առյժ ծածկույթով նախատեսված բժշկական ծախսերը հապուցվում են ողջամիտ չափով՝ պայմանով, որ իրականացված բուժումը բուժական միջոցները իրավասու բժշկական մարմինների կողմից ճանաչվում են որպես անհրաժեշտ՝ րվյալ հիվանդության, վնասվածքի կամ բժշկական վիճակի համար:

Ապահովագրության տարածք՝ ՀՀ

Ապահովագրական գումար յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամը՝ առանց տարիքային սահմանափակման:

Ապահովագրման ժամկետ՝ 1 տարի:

Ապահովագրական ընկերության հետ պայմանագրային հարաբերություններ ունեցող բուժ. հաստատություններում հերթերի սպասարկման էլեկտրոնային հերթագրման համակարգ՝ կտրոնների առկայությամբ

Այցելության օրվա համար նախապես գրացման՝ հերթագրման հնարավորություն զանգի միջոցով

Ապահովագրված անձանց համար, հարկ եղած դեպքում, անհրաժեշտ մասնագետի այցի գրանցում, խորհրդատվություն

1. ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Շտապ բուժօգնության բոլոր տեսակներ
- Շտապ բժշկական ռեպատրիացիա և բժշկական էվակուացիա
- Անհրաժեշտության դեպքում՝ հիվանդի տեղափոխում այլ բժշկական հաստատություն:
- 24/7 բժիշկ խորհրդատուի ծառայություններ և դիսպետչերական վահանակ

2. ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՑԱՅԻՆ (ԱՄԲՈՒԼԱՏՈՐ) ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Բժիշկ-մասնագետների առաջնային և կրկնակի խորհրդատվություններ, այդ թվում՝ նեղ մասնագետների,
- Լաբորատոր ախտորոշում. հարկվիճիկական, բիոքիմիական, մանրէաբանական, շիճուկաբանական, հորմոնալ, ցիտոլոգիական և իմունաբանական և այլ
- Գործիքային ախտորոշում. ռենտգենաբանական հետազոտություն, համակարգչային տոմոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա, ՈւձՀ, էնդոսկոպիկ և այլն,
- Ամբուլատոր պայմաններում բժշկական մանիպուլյացիաների իրականացում անհետաձգելի և պլանային դեպքերում,
- Հիվանդանոցային պայմաններ չպահանջող անհետաձգելի և պլանային թերապևտիկ հիվանդությունների բուժում,
- Անհետաձգելի և պլանային փոքր վիրահատություններ

- Վնասվածքների (կոտորվածքներ, հողախախտեր, փափուկ հյուսվածքների սայջարդ, վերքեր կամ դրանց համակցում) բուժում,
- Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում,
- Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
- Սուր թունավորումների թեթև ձևերի ամբուլատոր բուժում,
- Դեղամիջոցներ (որոնք արտոնագրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից) և վիրակապական պարագաներ (բացառությամբ սննդի, սննդային, բիրոգիական հավելումների, կոսմետիկայի, հանքային ջրերի, վիտամինային մոնոթերապիայի)
- Հարբժշկական պարագաներ՝ կորսետներ, էլաստիկ գուլպաներ, անշարժացնող միջոցներ, ճողվածքի պլաստիկայի ցանց՝ մինչև 60 000 ՀՀ դրամ սահմանաչափով (ներհիվանդանոցային և արտահիվանդանոցային)
- Դեղատների առնվազն մեկ ցանց, որտեղից Ապահովագրված անձը կկարողանա ձեռք բերել նշանակված դեղորայքը առանց տեղում վճարում կատարելու՝ համապատասխան ուղեգրի առկայության դեպքում,
- Պատվաստումներ արտասահման մեկնելու համար,
- Տնային կանչ երևան քաղաքում (Ապահովագրողի կողմից նշված ամբուլատոր բուժկենտրոնից), ինչպես նաև ՀՀ մարզերում (Ապահովագրված անձին սպասարկող՝ տվյալ տարածքում գտնվող բժշկական հաստատություններից)
- Տնային պայմաններում անալիզների և այլ լաբորատոր գործիքային հետազոտությունների կազմակերպում

3. ՄՍԱԳԻՆՆԱՐ ԲՈՒԺՈՒՄ

- Անհետաձգելի և պլանային թերապևտիկ հիվանդությունների բուժում հիվանդանոցային պայմաններում,
- Վիրահատական և կոնսերվատիվ բուժում,
- Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտություններ,
- Ինֆեկցիոն, այդ թվում՝ COVID-19-ի, հիվանդությունների բուժում,
- Տարբեր տեսակի վնասվածքների (կոտորվածքներ, հողախախտեր, վերքեր, սայջարդեր, պոլիտրավմաներ) բուժում (ներառյալ մետաղական կոնսկտրուկցիաների արժեքը),
- Սուր ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում,
- Այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների բուժում,
- Սուր թունավորումների բուժում,
- Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում (որոնք չեն ներառվում պետական բյուջեի ծրագրակներում),
- Հիվանդասենյակների արժեքի փոխհատուցում օրական մինչև 20,000 ՀՀ դրամ փոխհատուցման սահմանաչափով:
- Բթի միջնապատի դեֆորմացիայի, դրա բարդությունների վիրահատական բուժում՝ մինչև 200,000 ՀՀ դրամ փոխհատուցման սահմանաչափով,

4. ՈՂՆԱՇԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների (օստերոխոնդրոզ) դեղորայքային բուժում,

- Վնասվածքին հաջորդող ֆիզիոթերապևտիկ միջոցառումներ և վերականգնողական միջոցառումներ մինչև 150,000 ՀՀ դրամ փոխհատուցման սահմանաչափով,
- Ողնաշարի միջողնային սկավառակների ճողվածքների վիրահատական բուժում մինչև 400,000 ՀՀ դրամ փոխհատուցման սահմանաչափով (արժեքի մեջ ներառվում են նաև բոլոր նախավիրահատական լաբորատոր և գործիքային հետազոտությունների արժեքները),

5. ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱ

- Էլեկտրոթերապիա՝ Էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, գերծայնային հաճախականության ալիքներով լիցավարկա, ամպլիպուս թերապիա, ուլտրամանուշակագույն ճառագայթում՝ Պայմանագրի գործողության ընթացքում 1 կուրս՝ 15 սեանս:

6. ԱՎՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

- Ակնաբուժի խորհրդատվություն, աչքի սուր հիվանդությունների և վիճակների թերապևտիկ և վիրահատական բուժում՝ ներառյալ անհրաժեշտ ախտորոշիչ հետազոտությունները,
- Աչքի պլանային վիրահատություններ՝ անհրաժեշտության դեպքում ոսպնյակի փոխարինմամբ, կոնյուկտիվիտի, գլաուկոմայի, կատարակտայի և ցանցթաղանթի ախտահարման բուժում,
- Տեսողության սրության ստուգում (վիզիոմետրիա, սկիասկոպիա, ռեֆրակտոմետրիա և այլն),
- Նշանակված օպտիկական ապակիների և կոնտակտային լինզաների ձեռքբերում (միայն տեսողության փոփոխության դեպքում)՝ տարեկան 20,000 ՀՀ դրամի սահմաններում:
- Օպտիկական առնվազն երեք խանութ կամ խանութների ցանց, որտեղ Ապահովագրված անձինք կկարողանան ստուգել իրենց տեսողությունը և ձեռք բերել ակնոցները կամ լինզաները նախատեսված դեպքերում՝ առանց տեղում վճարում կատարելու:

7. ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՈՒՄՆԵՐԻՆ

- Բնականոն և ախտաբանական հղիության վարում, ծննդոգնություն, ներառյալ կեսարյան հատումը՝ համախառն մինչև 150,000 ՀՀ դրամ փոխհատուցման սահմանաչափով, այդ թվում՝
- Հղիության վարում վճարովի հիմունքներով՝ Ապահովագրված անձի կողմից ընտրած բուժ. հաստատությունում,
 - Հղիության սկրինինգի համար անհրաժեշտ հետազոտությունները, ներառյալ ժառանգական հիվանդությունների և սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների հայտնաբերման ուղղված հետազոտությունները,
 - Հղիության ընթիստում բժշկական ցուցումներով,
 - Բժշկական հաստատություններում ծննդոգնության հետ կապված ծախսերի հատուցում (հարմարավետ հիվանդասենյակի արժեքի փոխհատուցում օրական մինչև 20,000 ՀՀ դրամ փոխհատուցման սահմանաչափով և այլն),
- Առաջին անգամ ապահովագրվող անձանց համար հղիության ընթացքի և ծննդոգնության գծով սպասման ժամկետ չի սահմանվում:

8. ՏԱՐԵԿԱՆ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԲՈՒԺ. ՄՏՈՒԳՈՒՄՆԵՐ.

- Թերապևտի խորհրդատվություն

09/2-Պ20-420

- Ակնաբույժի խորհրդատվություն՝ տեսողության սրության որոշմամբ,
- Ատամնաբույժի խորհրդատվություն,
- Գինեկոլոգի, ուրոլոգի խորհրդատվություն,
- Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով,
- Մեզի ընդհանուր քննություն,
- Շաքարի որոշում արյան մեջ,
- Լիպիդային պրոֆիլ 35 տարեկանից բարձր անձանց համար,
- PAP քսուք 30 տարեկանից բարձր կանանց համար,
- PSA թեստ 45 տարեկանից բարձր տղամարդկանց համար,
- Էլեկտրասրտագրություն,
- Որովայնի խոռոչի և փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն,
- Կրծքագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն,

Տարեկան պրոֆիլակտիկ բուժստուգումները կարող են իրականացվել Ապահովագրողի կողմից նշված բժշկական կենտրոններում տարվա ընթացքում մեկ անգամ:

9. ՕՆԿՈԼՈԳԻԱ

- Չարորակ նորագոյացությունների վիրահատական բուժում
- Չարորակ նորագոյացությունների ոչ վիրահատական բուժում ստացիոնար պայմաններում (ճառագայթային թերապիա և քիմիոթերապիա) 1 (մեկ) կուրս մինչև 500,000 ՀՀ դրամ:

10. ՄՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Սրտանոթային վիրաբուժություն (բաց եղանակով)
- Սրտանոթային վիրաբուժություն (փակ՝ ներանոթային եղանակով)
- Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով,
- Աորտայի պրոթեզավորում (հատուցվում են բացառապես աորտայի անևրիզմայի շերտազատման անհետաձգելի հիվանդությունները),

Սույն ծածկույթով սահմանվում է սիրտ-անոթային համակարգի վիրաբուժության ծախսերի հատուցման առավելագույն սահմանաչափ 1 մլն. 500 հազ. ՀՀ դրամ յուրաքանչյուր անձի համար:

11. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քրոնիկ հիվանդությունների սրացումների բուժում,
- Վիրաբուժական միջամտություններ, որոնք հանգեցնում են հիվանդության կամ վիճակի լիարժեք ապաքինմանը (պլանային վիրահատություններ, այդ թվում՝ հիվանդության ոչ սուր փուլում, բարորակ նորագոյացությունների պլանային վիրահատական բուժում):

09/2-Պ20-420

12. ԱՏԱՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ

- Ընթացիկ ատամնաբուժական օգնություն համաձայն ստորև աղյուսակի: Ծածկույթը ուժի մեջ է մտնում պայմանագրի ստորագրելու պահից և ատամնաբուժական բարտի առկայության դեպքում:
- Ընթացիկ ատամնաբուժական օգնություն համաձայն ստորև աղյուսակի:

Ծառայություններ	
1. Թերապիա	
Ատամի պսակի վերականգնում	10,000 AMD 12,000 AMD 15,000 AMD
• Պարզ • Միջին • բարդ	
Էնդոդոնտիա	10,000 AMD 12,000 AMD 18,000 AMD + 1,000 AMD
• մեկ արմատանի ատամ • երկու արմատանի ատամ • երեք արմատանի ատամ • արմատների կրկնակի բուժում	
2. Պերիոդոնտիտի բուժում և կանխարգելում	
• ատամնանստվածքների հեռացում, ատամների պսակի փայլեցում, Air-Flow կուրս տարվա ընթացքում մեկ անգամ	15,000 AMD
3. Վիրաբուժություն	
• պարզ ատամի հեռացում • բարդ ատամի հեռացում • իմաստության ատամի հեռացում • ռետենցված ատամի հեռացում • ապէքսեկտոմիա • թարախակույտի բացահատում	5,000 AMD 10,000 AMD 6,000 AMD 8,000 AMD 10,000 AMD 3,000 AMD
4. Հետազոտություն	
• մեկ ատամի ռենտգենգրաֆիա • մեկ ատամի 3D ռենտգենգրաֆիա	1,500 AMD 10,000 AMD
Բացառություններ	
• Ապահովագրված անձի նախնական բուժ. զննման քարտում կարիեսով ախտահարված, օրթոպեդիկ կոնստրուկցիայի տակ գտնվող և պայմանագրի կնքման պահին վերապլոմբավորման կարիք ունեցող ատամների բուժում	

ծառայություններ; բուժման էքստրակորպորալ մեթոդներ, պրոֆիլակտիկ և կազրուրողական միջոցառումներ, խնունդային վարքեր, մարզասարքեր, արևաբուժարան, ջրային պրոցեդուրաներ, սանատոր կուրորտային բուժում և այլն

14. Կուսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն, ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժություն (բացառությամբ սոփ դեպքերի, երբ նման բուժումը կամ վիրահատությունը պահանջվում է ապահովագրության գործողության ժամկետում՝ տեղի ունեցած վնասվածքի արդյունքում), մաշկի և լորձաթաղանթների գոյացություններ՝ խալեր, պոլիպներ, պապիլյոմաներ և այլն:
15. Բժշկական և այլ հարբժշկական սարքավորումներ, սրտի դիթերմալիզացիոն միջոցառումներ (էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություններ, էլեկտրոարդիոգրա և այլն), կարդիոլերտեր-դեֆիբրիլյատորներ, լսողական սարքեր և իմպլանտներ, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ ձեռք բերելու, դրանց հարմարեցման համար կատարված ծախսերը, բոլոր տեսակի պրոթեզավորումները, դրանց պատրաստումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումն անհրաժեշտ է Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած վնասվածքից հետո,
16. Քաշի կարգավորում, խոսքի արատների շտկում,
17. Բուժական սնունդ, սննդային և կենսաբանական ակտիվ հավելումներ (վիտամիններ և այլն), խնամքի պարագաներ և հանքային ջրեր,
18. Ապահովագրված կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը, ինչպես նաև Ապահովագրված անձի ցանկությամբ կամ առանց բժշկի նշանակման իրականացված բուժման ծախսերը,
19. Պալարախտ, պոլիմիելիտ, նյարդային համակարգի վարակային հիվանդություններ
20. Ալլերգոդիագնոստիկա, սկարիֆիկացիոն փորձեր,
21. Ակտիվիզմ, թմրամոլություն, տոքսիկոմանիա և դրանցով պայմանավորված թունավորումներ, վնասվածքներ և բարորություններ
22. Միջուկային էներգիայի, պատերազմական գործողությունների, ռադիոակտիվ ճառագայթման, դրանց հետևանքների հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող հիվանդությունների, վնասվածքների և այլնի բուժում
23. Ողնաշարի և միջողնային սկավառակների դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումներ, միջողնային սկավառակների ճողվածքներ օստեոխոնդրոզ, կեցվածքի խախտման շեղումներ, սկոլիոզ, կիֆոզ և այլն,
24. Շաքարային դիաբետ (I և II տիպ) և դրանց հետևանքների վերացմանը նպաստող բուժում:

ԳՆՈՐԴ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի
իրականացման մասնաճյուղ»

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900000902255

Կենտրոնական գանձապետարան

Տնօրեն

Մամիկոն Գասպարյան



ՎԱՃԱՌՈՂ

ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5

ՀՎՀՀ՝ 02551341

Հ/Հ՝ 163008157113

ՀԱՅԷԿՈՆՈՍՏԲԱՆԿ ԲԲԸ

Գործադիր տնօրեն



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության			Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020-21 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ	Առողջության ապահովագրման ծառայություններ
1	6651120/2														6,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամսական կարգով:

ԳՆՈՐԴ


Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամի «Զրային տնտեսության ծրագրերի
իրականացման մասնաճյուղ»

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց փակուղի 8

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900000902255

Կենտրոնական գանձապետարան



ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 Ա.5

ՀՎՀՀ՝ 02551341

Հ/Հ՝ 163008157113

Գործադիր տնօրեն

Արմինե Մելքոնյան

(ստորագրություն)



Հավելված 3
« » դեկտեմբեր 2020 թ. կնքված
ՋՏՄ-ՊԾԳՀ-ԾՁԲ-2020/5 ծածկագրով պայմանագրի
Պատվիրատու

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄԴԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
		տեխնիկական ընթացագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » դեկտեմբեր 2020 թ. կնքված
ՋՏՄ-ՊԾԳՀ-ԾՁԲ-2020/5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

ազգանուն, անուն

ստորագրություն

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ Առողջության կամավոր ապահովագրության պայմանները փաստաթուղթը նպատակ է հետապնդում տալ Պայմանների կիրառման յուրաքանչյուր ոլորտի ապահովագրական օբյեկտ, ապահովագրական պատահար, ապահովագրական հատուցում և այլ հասկացությունների սահմանումը, ինչպես նաև յուրաքանչյուր ծածկույթի պարագայում կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերի, չհատուցվող ծախսերի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի և ապահովագրական պատահարի դեպքում կողմերի գործողությունները:
- 1.2 Պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 1.3 Ընկերությունն իրականացնում է Առողջության ապահովագրությունը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված առողջության ապահովագրության դասով:
- 1.4 Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադիրն ծանոթացնել Պայմաններին, տալ Պայմանների մեկ օրինակ և այդ մասին նշում կատարել Պայմանագրում/Վկայագրում: Պայմանագրի/Վկայագրի և Պայմանների միջև հակասությունների դեպքում գործում են Պայմանագրով/Վկայագրով սահմանված դրույթները:
- 1.5 Պայմաններով ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքները, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,
- 1.6 Պայմանները կցվում են Պայմանագրին/Վկայագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադիրի համար:
- 1.7 Սույն փաստաթուղթը համապատասխանում է ISO 9001:2015 և 27001 :2013 ՈԿՀ և ՏԱԿՀ ստանդարտներին:
- 1.8 Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:
- 1.9 Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և կարող է տեղադրվել Ընկերության պաշտոնական վեբ կայքում (www.silinsurance.am):

2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- 2.1 Տերմիններ և հասկացություններ.
 - Ընկերություն - ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ:
 - Պայմաններ - ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ Առողջության կամավոր ապահովագրության պայմաններ:
 - Ընկերության խորհուրդ կամ խորհուրդ - Ընկերության կանոնադրության համապատասխան Ընկերության բաժնետերերի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին:
 - Ընկերության գործադիր տնօրեն կամ Գործադիր տնօրեն - Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության միանձնյա գործադիր մարմին:

- Որակի կառավարման համակարգ – Որակի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
- Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ – Տեղեկատվական հոսքերի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
- Որակի պատասխանատու – Ընկերության աշխատող, որը պատասխանատու է Որակի ապահովմանն ու կառավարմանը ներկայացվող պահանջների կատարման համար:
- Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր) – Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ՝ Պայմաններում նախատեսված բացառությունների և չհատուցվող ծախսերի) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (Ապահովագրված անձին), իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել ապահովագրության պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը՝ դրանում նշված կարգով և ժամկետներում:
- Ապահովագրող – «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը, որն իրականացնում է ապահովագրական գործունեություն և օրենքով նախատեսված այլ գործունեություն՝ համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:
- Ապահովադիր – օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպարարական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն, գործունակ ֆիզիկական անձ, որն Ապահովագրողի հետ կնքել է Պայմանագիր/Վկայագիր:
- Ապահովագրված անձ – Պայմանագրում/Վկայագրում նշված ֆիզիկական անձ, որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Պայմանագրում/Վկայագրում Ապահովագրված անձ նշված չլինելու դեպքում Ապահովադիրը հանդիսանում է Ապահովագրված անձ: Որպես Ապահովագրված անձ կարող են հանդես գալ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց տարիքը Պայմանագրի կնքման պահին չի գերազանցում 70 տարեկանը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ տարիք նշված չէ: Ապահովագրված անձը հանդիսանում է Շահառու, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
- Վկայագրի կողմեր – Ապահովագրողը և Ապահովադիրը միասին:
- Ապահովագրական ռիսկ – ապահովագրման ենթակա հնարավոր պատահար, որը կարող է տեղի ունենալ Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում, որը կրում է հանկարծակի և պատահական բնույթ:
- Ապահովագրական հաբուցում – այսուհետ՝ Հատուցում, ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմանների և ապահովագրական փաթեթի համաձայն Ապահովագրված Անձին տրամադրված բժշկական և այլ նմանատիպ ծառայությունների դիմաց Ապահովագրված անձին կամ բժշկական հաստատությանը վճարման ենթակա գումար:
- Ապահովագրական գումար – Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում դրանով նախատեսված Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափը:
- Ապահովագրական փաթեթ – ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի շրջանակներում Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի Հավելվածով սահմանված հատուցման ենթակա բժշկական և այլ նմանատիպ ծառայությունների ցանկ:

- Ապահովագրական ծածկույթ - Ապահովագրական փաթեթի ներքո տրամադրվող ծառայությունների ցանկ:
 - Բժշկական հաստատություններ - համապատասխան լիցենզիա ունեցող բուժապրոֆիլակտիկ հաստատություն, գիտահետազոտական և բժշկական ինստիտուտներ, այդ թվում վերականգնողական և սանիտարապրոֆիլակտիկ հաստատություններ, ինչպես նաև ֆիզիկական անձիք, որոնք լիցենզիայի հիման վրա ՀՀ և Արցախի Հանրապետության տարածքում իրականացնում են բժշկական գործունեություն:
 - Դեղատներ- կազմակերպություններ, որոնք իրականացնում են դեղատնային գործունեություն, այն է՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ դեղերի և ՀՀ կառավարության սահմանած այլ ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողնում, տեղեկատվություն և խորհրդատվություն, առողջ ապրելակերպի քարոզչություն, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում դեղերի պատրաստում կամ առաքում:
 - Բժշկական ծառայություններ-միջոցառումներ կամ միջոցառումների համախումբ՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը, դրանց ախտորոշմանը և բուժմանը, որոնք ունեն առանձին ամփոփ նշանակություն և որոշակի արժեք:
 - Բժշկապրանսպորտային ծառայություններ- Ապահովագրված անձին փոխադրելու հետ կապված ծառայություններ՝
 - ✓ շտապ օգնության մեքենայով կամ այլ տեսակի տրանսպորտով ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալու վայրից մինչև ՀՀ տարածքում մոտակա բժշկական հիմնարկություն փոխադրելը,
 - ✓ Ապահովագրված անձի առողջական վիճակին համապատասխան՝ նրան տրանսպորտային միջոցով (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական անձնակազմի ուղեկցությամբ), բժշկական պատճառներով (բժշկի նշանակումով) ՀՀ տարածքում գտնվող բժշկական հիմնարկությունից մեկ այլ բժշկական հիմնարկություն փոխադրելը,
 - ✓ Ապահովագրված անձի առողջական վիճակին համապատասխան նրան տրանսպորտային միջոցով (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական անձնակազմի ուղեկցությամբ), ՀՀ տարածքում Ապահովագրված անձի մշտական բնակության վայրին ամենամոտ բժշկական հիմնարկություն փոխադրելը:
 - Դժբախտ պատահար՝ Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած արտաքին ազդեցության, հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ) իրադարձություն (դեպք), որի հետևանքով ապահովագրված անձին պատճառվել է մարմնական վնասվածք և (կամ) մահ: Ընդ որում, դժբախտ պատահարը պետք է տեղի ունեցած լինի սույն պայմանագրի գործողության ընթացքում և հաստատվի համապատասխան գրավոր ապացույցով՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից (Ոստիկանություն և այլն):
- 2.2 Հապավումներ.
- ՀՀ - Հայաստանի Հանրապետություն:
 - ՈԿՀ - ISO 9001 ստանդարտին համապատասխան Որակի կառավարման համակարգ:
 - ՏԱԿՀ - ISO 27001 ստանդարտին համապատասխան Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

- 3.1 Սույն Պայմանները մշակված են՝ համաձայն «Ապահովագրության և Ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ դասի, 2 ենթակետի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված թիվ ԱՊՈ 0004 (0033) Լիցենզիայի 2րդ դասին:
- 3.2 Պայմանները հանդիսանում են «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության և Ապահովագրի միջև կնքված ապահովագրության Պայմանագրերի/Վկայագրերի անբաժանելի մասը: Պայմանագրով/Վկայագրով կարող են նախատեսվել նաև սույն պայմաններով չնախատեսված այլ դրույթներ:
- 3.3 Սույն Պայմանների համաձայն ապահովագրությունը գործում է միայն Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
- 3.4 Սույն Պայմանների և ՀՀ օրենսդրության («Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք) համաձայն՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովագիր) կնքում է առողջության ապահովագրության պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր)՝ վերջիններիս, (իրավաբանական անձանց դեպքում՝ իրավաբանական անձանց աշխատակիցներին, իսկ ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքերում նաև աշխատակիցների ընտանիքի անդամներին) տրամադրելով մատուցված բժշկական և այլ ծառայությունների ծախսերի հատուցում՝ համաձայն սույն Պայմաններից բխող Ապահովագրողի կողմից առաջարկվող Ապահովագրական փաթեթի (այսուհետ՝ Փաթեթ):
- 3.5 Ապահովագրության սուբյեկտներն են՝ Ապահովագրողը, Ապահովագիրը և Ապահովագրված անձը:
- 3.6 Ապահովագիրը Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած անձն է: Ապահովագիրը Պայմանագիրը կարող է կնքել հոգուտ իրեն կամ հոգուտ երրորդ անձի (երրորդ անձանց) (այսուհետ՝ Ապահովագրված անձինք): Ապահովագիրներ կարող են հանդիսանալ՝
 - 3.6.1 ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք գրանցված են և գործում են ՀՀ օրենսդրության համաձայն,
 - 3.6.2 գործունակ ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ և օտարերկրյա քաղաքացիներ:
- 3.7 Սույն Պայմանների համաձայն ապահովագրության Պայմանագրերով/Վկայագրերով ապահովագրված անձինք կարող են հանդիսանալ ՀՀ և ԱՀ տարածքներում գտնվող ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները:
- 3.8 Պայմանագիրը կնքված է համարվում հոգուտ Ապահովագրի, եթե պայմանագրում այլ անձ նշված չէ որպես Շահառու:
- 3.9 Պայմանագրով կարող են կիրառվել Ապահովագրված անձանց տարիքային սահմանափակումներ:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

- 4.1 Առողջության ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովագրի կամ Ապահովագրված անձի ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահը՝ կապված ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում բժշկական և այլ ծառայությունների ստացման ծախսերի հետ որոնք նախատեսված են փաթեթով:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

- 5.1 Ապահովագրական ռիսկն առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծությունն է:

5.2 Ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, այն է՝ Ապահովագրված անձի՝ Պայմանագրի/Վկայագրի պայմանների համաձայն և դրա գործողության ժամանակահատվածում բժշկական հաստատություն և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ հաստատություն դիմելը՝ առողջական վիճակի վատացման, վնասվածքի, թունավորման և (կամ)՝ բժշկական օգնության ցուցաբերման կարիք ունեցող այլ իրավիճակների կապակցությամբ, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում: Բժշկական ծառայությունները տրամադրվում են Ապահովագրված անձին Պայմանագրով/Վկայագրով նախատեսված Ծրագրի համաձայն կամ ըստ Ապահովագրողի հետ լրացուցիչ համաձայնության՝ խորհրդատվական, բուժական, ախտորոշիչ, կանխարգելիչ, վերականգնողական, սանատոր-առողջարանային, դեղորայքային, շտապ և անհետաձգելի բժշկական կամ այլ օգնություն ցուցաբերելու միջոցով: Ապահովագրված անձին՝ Ծրագրի համաձայն բժիշկների ցուցումներով կարող են հատկացվել բուժօրհանսպորտային ծառայություններ:

5.3 Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով, ապա ապահովագրական պատահար չի համարվում Ապահովագրված անձի բժշկական կամ այլ ծառայություն ստանալու համար դիմելը, որը կապված է՝

5.3.1 սուր իրավիճակների և (կամ) վնասվածքների հետ, որոնք առաջացել են կամ ստացվել են ալկոհոլի, թմրադեղերի կամ տոկսիկ հարբեցողության հետևանքով,

5.3.2 վնասվածք ստանալու կամ այլ պաթոլոգիական վիճակի հետ, որն առաջացել է Ապահովագրված անձի կողմից հակաիրավական գործողություններ կատարելու արդյունքում: Հակաիրավական գործողությունների կատարված լինելու հանգամանքը, ինչպես նաև հակաիրավական գործողությունների և ստացված վնասվածքի կամ պաթոլոգիական վիճակի միջև առկա պատճառահետևանքային կապը պետք է հաստատված լինի համապատասխան մարմնի որոշմամբ կամ եզրակացությամբ,

5.3.3 վնասվածք ստանալու կամ այլ պաթոլոգիական վիճակի հետ, ինչը Ապահովագրված անձի՝ սեփական առողջությանը միտումնավոր վնաս հասցնելու, ինքնասպանության փորձերի և Ապահովագրված անձի՝ ապահովագրական պատահարի առաջացմանն ուղղված այլ միտումնավոր գործողությունների հետևանք է, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդ վիճակին երրորդ անձանց հակաիրավական գործողությունների հետևանքով, ինչը պետք է հաստատված լինի համապատասխան մարմնի որոշմամբ կամ եզրակացությամբ,

5.3.4 առաջացած պատերազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի, զորավարժանքների կամ այլ զինվորական միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, ահաբեկչական գործողությունների, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների կամ գործադուլների, բնական աղետների, բնական կամ տեխնիկական բնույթի արտակարգ իրավիճակների, էկոլոգիական աղետների հետ:

5.4 Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրի/Վկայագրի չկնքել այն անձանց հետ, ովքեր Պայմանագրի կնքման պահին՝

5.4.1 65 տարեկանից բարձր են,

5.4.2 հաշվառված են նարկոլոգիական, նյարդահոգեբանական, թոքախտային, ուռուցքաբանական, մաշկավեներական (վեներական հիվանդությունների

պատճառով) դիսպանսերներում, ՁԻԱՀ և ՄԻԱՎ-ի բուժման և պրոֆիլակտիկայի կենտրոններում,

5.4.3 գտնվում են ստացիոնար հսկողության տակ:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 6.1 Ապահովագրական գումարն Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:
- 6.2 Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 7.1 Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ օրացուցային տարով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում/Վկայագրում:
- 7.2 Պայմանագիրը/Վկայագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
- 7.3 Պայմանագրի/Վկայագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում որպես ապահովագրության գործողության ավարտի ամսաթիվ նշված ամսաթվի ժամը 23:59-ին, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ կամ առկա չեն այնպիսի հանգամանքներ, որոնց տեղի ունենալու դեպքում նախատեսված է ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվից շուտ Պայմանագրի/Վկայագրի դադարեցում:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1 Ապահովագրավճարն ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված կարգով և ժամկետներում: Հերթական ապահովագրավճարը հանդիսանում է ապահովագրավճարի մաս՝ դրա տարաժամկետ վճարման դեպքում:
- 8.2 Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ կիրառվող ապահովագրավճարի դրույքաչափն է:
- 8.3 Ապահովագրողն ապահովագրավճարի չափը որոշելիս կիրառում է իր կողմից հաստատված ապահովագրական սակագները՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:
- 8.4 Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ենթակա չափի որոշման նպատակով Ապահովագրողը կարող է առաջարկել Ապահովադրին (Ապահովագրված անձին) լրացնել հարցաթերթիկ և (կամ) անցնել նախնական բժշկական զննությունն: Եթե Կողմերի միջև չկա այլ նախապայման, ապա նախնական բժշկական զննությունն անցկացվում է Ապահովագրողի հաշվին: Նախնական բժշկական զննությունն անցկացվում է Ապահովագրողի կողմից սահմանված ժամկետներում և Ապահովագրողի կողմից ընտրված համապատասխան լիցենզիա ունեցող Բժշկական հաստատությունում: Այն ծառայությունների մասով, որոնց վերաբերյալ Ապահովագրողի կողմից ներկայացվել է նախնական բժշկական զննություն անցնելու պահանջ, իսկ Ապահովագրված անձը չի անցնել նախնական բժշկական զննություն սահմանված

Ժամկետում կամ սահմանված ժամկետը լրանալուց հետո Ապահովագրողի կողմից 7 օրով երկարաձգված ժամկետում (եթե Ապահովագրված անձն ապացուցել է սահմանված ժամկետում դիմելու անհնարինությունը), այդ մասով Պայմանագիրն ուժի մեջ չի մտնում, և Ապահովագրողը մերժում է տվյալ Ապահովագրված անձի կողմից ներկայացված ցանկացած հայտ: Նախնական բուժ. զննման տվյալները չեն տրամադրվում Ապահովադիրին և/կամ Ապահովագրված անձին:

- 8.5 Պայմանագրով/Վկայագրով ապահովագրավճարն Ապահովադիրը կարող է վճարել միանվագ (մեկ վճարմամբ Պայմանագրի/Վկայագրի ամբողջ ժամկետի համար) կամ տարաժամկետ: Ապահովագրավճարն (հերթական ապահովագրավճարը) Ապահովադիրը կարող է վճարել կանխիկ կամ անկանխիկ՝ Ապահովագրողի (նրա ներկայացուցչի) հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Ապահովագրավճարի վճարման օր է համարվում Ապահովագրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի դրամարկղ այն վճարելու օրը կամ Ապահովագրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի հաշվարկային հաշվին դրամական միջոցների փոխանցման օրը, եթե ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
- 8.6 Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադիրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չծանուցել այդ մասին Ապահովադիրին: Ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չսահմանելու և այդ մասին Ապահովադիրին չծանուցելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցումներ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա 00:00 ժամից հետո տեղի ունեցած իրադարձության կամ դեպքի հետևանքով առաջացած վնասների համար:
- 8.7 Ապահովադիրի կողմից չվճարված ապահովագրավճարի վճարման համար Ապահովագրողի կողմից լրացուցիչ ժամկետ սահմանելու մասին Ապահովադիրին ծանուցում ուղարկելու դեպքում վերջինս պարտավոր է վճարել կետանցված ապահովագրավճարը ծանուցման մեջ նշված ժամկետում: Ապահովադիրի կողմից լրացուցիչ ժամկետում ապահովագրավճարը չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը՝ առանց Ապահովադիրին այդ մասին ծանուցելու:
- 8.8 Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում ՀՀ օրենսդրության մեջ փոփոխությունների արդյունքում տեղի ունենա բժշկական ծառայությունների և/կամ դեղերի ու բժշկական պարագաների գնաճոյացման վրա ազդող հարկատեսակների ավելացում, Ապահովագրողը, ելնելով Պայմանագրի/Վկայագրի վնասաբերության մակարդակից, իրավունք ունի, Ապահովադիրի հետ փախադարձ համաձայնությամբ, վերանայել Պայմանագրի/Վկայագրի գծով յուրաքանչյուր Ապահովագրված անձի գծով ապահովագրավճարի չափը՝ հարկատեսակի ավելացման չափով:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԴՐԱ ԿՆՔՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 9.1 Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է սույն Պայմանների հիման վրա, որոնք հանդիսանում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը: Պայմանագրում/Վկայագրում կարող են նախատեսվել ՀՀ օրենսդրությանը չհակասող և սույն Պայմաններում չնշված այլ դրույթներ: Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթների միջև տարբերությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված դրույթներին:
- 9.2 Պայմանագրի/Վկայագրի կնքման համար Ապահովագրողը կարող է դիմել Ապահովագրողին վերջինիս կողմից սահմանված համապատասխան ձևի գրավոր դիմումի միջոցով, որտեղ զետեղվում են ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման համար անհրաժեշտ տվյալները, կամ այլ մատչելի ձևով հայտնել Պայմանագրի/Վկայագրի կնքման մտադրության մասին (բանավոր դիմում, ֆաքս, էլ.փոստ և այլն):
- 9.3 Ապահովագրողն իրավունք ունի սույն Պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին և 20-ին ապահովագրության ներկայացնել լրացուցիչ անձանց՝ վերջիններիս համար ապահովագրավճար վճարելով՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համամասնությամբ: Լրացուցիչ անձանց ապահովագրելու մասին դիմումը ներկայացվում է ոչ պակաս, քան նշված ամսաթվերից երեք աշխատանքային օր առաջ:
- 9.4 Ապահովագրողն իրավունք ունի սույն Պայմանագրի շրջանակներում Ապահովագրված անձանց՝ աշխատանքից ազատվելու դեպքում, առանց նրանց համաձայնության յուրաքանչյուր ամսվա 1-ից, 10-ից և 20-ից Պայմանագիրը հանել Ապահովագրված անձանց՝ Ապահովագրողին համապատասխան դիմում ներկայացնելով և կցելով աշխատանքից ազատման դիմումի կամ հրամանի պատճեն: Տվյալ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտությունը որոշում է Ապահովագրողը: Ապահովագրավճարի մասնակի վերադարձի հաշվարկն իրականացվում է վճարված ապահովագրավճարի՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի նկատմամբ համապատասխան համամասնությամբ: Այն պարագայում, եթե դիմումին չի կցվում աշխատանքից ազատման դիմումի պատճենը, Ապահովագրավճարի մասնակի վերադարձի հաշվարկն իրականացվում է վճարված ապահովագրավճարի՝ Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի նկատմամբ համապատասխան համամասնության և ապահովագրության դադարեցման օրվա դրությամբ Ապահովագրողի կողմից տվյալ Ապահովագրված անձին կատարված Ապահովագրական հատուցման դրական տարբերության չափով: Ապահովագրության դադարեցման մասին դիմումը ներկայացվում է ոչ պակաս, քան նշված ամսաթվերից երեք աշխատանքային օր առաջ:
- 9.5 Եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովագրողը հայտնել է ակնհայտ կեղծ տեղեկություններ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և վերջինիս տեղի ունենալու դեպքում հնարավոր վնասների չափը (ապահովագրական ռիսկ) որոշելու համար, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել պայմանագիրը և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքներ:
- 9.6 Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքված է համարվում Պայմանագիրը/Վկայագիրը ստորագրելու պահից:
- 9.7 Պայմաններում ներառված դրույթները, որոնք ընդգրկված չեն Պայմանագրում/Վկայագրում, պարտադիր են Ապահովագրի համար, եթե Պայմանագրում/Վկայագրում ուղղակիորեն նշված է Պայմանների կիրառման մասին, ընդ

որում Պայմանների մեկ օրինակ տրվում է Ապահովադիրին, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում Պայմանագրում/Վկայագրում:

- 9.8 Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է ներառել տարբեր ապահովագրական փաթեթներ («Առողջության կամավոր ապահովագրության պայմաններին աջակցող փաստաթղթեր» /Կող/09-ՊՄ18-0005/ԱՓ-01/), ինչպես նաև այդ փաթեթները կարող են համալրվել այն ծառայություններով, որոնք ընդգրկված չեն տվյալ փաթեթում: Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի փաթեթներում ընդգրկված ծառայությունների համար կարող են սահմանվել համապատասխան սահմանաչափեր:
- 9.9 Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի հետ միաժամանակ Ապահովադիրին (Ապահովագրված անձին) կարող է հանձնվել ապահովագրական քարտ (պլաստիկ և այլն) և, անհրաժեշտության դեպքում՝ բժշկական կամ այլ հիմնարկության անցաթուղթ: Ապահովագրական քարտը համարվում է անվանական փաստաթուղթ և ներառում է հետևյալ տեղեկությունները. ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի (ապահովագրական քարտի) սերիան և համարը:
- 9.10 Ապահովադիրին (Ապահովագրված անձին) արգելվում է փոխանցել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը (ապահովագրական քարտը) այլ անձի՝ վերջինիս կողմից ապահովագրության Պայմանագրում/Վկայագրով ծառայություններ ստանալու նպատակով: Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում որպես Ապահովագրված անձ չնշված անձանց ծառայությունների ծախսերը Ապահովագրողի կողմից չեն հատուցվում:
- 9.11 Ապահովադիր (Ապահովագրված անձի) կողմից ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի և/կամ ապահովագրական քարտի կորստի դեպքում Ապահովագրողը գրավոր դիմումի հիման վրա Ապահովադիրին (Ապահովագրված անձին) տրամադրում է համապատասխանաբար ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կամ ապահովագրական քարտի կրկնօրինակը: Կրկնօրինակի վրա Ապահովագրողը կատարում է կրկնօրինակ լինելու վերաբերյալ համապատասխան գրառում: Կորած ապահովագրական քարտը համարվում է անվավեր կորստի մասին դիմումի ստացման օրվանից:
- 9.12 Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարեցվում է նաև՝
- 9.12.1 ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտի դեպքում,
 - 9.12.2 Ապահովագրված անձի մահվան դեպքում,
 - 9.12.3 Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրով Ապահովադիր (Ապահովագրված անձի) հանդեպ Ապահովագրողի պարտականությունների ամբողջ ծավալով կատարման դեպքում,
 - 9.12.4 ապահովագրավճարի տարաժամկետ վճարման պայմանագրերի մասով իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադիր սնանկ ճանաչվելու դեպքում՝ համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու պահից,
 - 9.12.5 Ապահովադիր պահանջով ցանկացած ժամանակ, եթե Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը չի դադարել ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով,
 - 9.12.6 կողմերի համաձայնությամբ, << օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 9.13 Եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու հնարավորությունը դադարել է և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով, ապա ապահովագրության

Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ դադարում է, ընդ որում Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու ապահովագրավճարը միայն մինչև ապահովագրության պայմանագրի/վկայագրի գործողության դադարումն ընկած ժամանակահատվածի համար:

- 9.14 Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարեցվել է Ապահովագրի նախաձեռնությամբ, ապա այդ դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովագրին Պայմանագրի/Վկայագրի չլրացած օրերի համար վճարված ապահովագրավճարը, որը նվազեցվում է ընդհանուր ապահովագրավճարի 20%-ի չափով և վճարված և/կամ հաշվարկված հատուցումների գումարներով՝ համաձայն սույն կետում նշված բանաձևի (եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով):

$$RP = \frac{P}{IP} * IRP - P * 20\% - PC$$

RP՝ վերադարձվող գումար, P՝ ընդհանուր ապահովագրավճար, IP՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրության ժամկետ, IRP՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրության չլրացած ժամկետ, PC՝ հատուցումների գումարներ:

- 9.15 Եթե Ապահովագրի նախաձեռնությամբ Պայմանագիրը/Վկայագիրը դադարեցվում է մասնակի, ապա այդ դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովագրին Պայմանագրի/Վկայագրի չլրացած օրերի համար վճարված ապահովագրավճարը, որը նվազեցվում է Ապահովագրված անձանց գծով հաշվարկված և/կամ վճարված հատուցումների գումարների չափով:
- 9.16 Ապահովագրողի կողմից վերադարձվող ապահովագրավճարի գումարը կարող է չնվազեցվել ընդհանուր ապահովագրավճարի 20%-ի չափով, եթե Ապահովագրի նախաձեռնությամբ Պայմանագրի/Վկայագրի դադարեցումը պայմանավորված է.
- 9.16.1. Ապահովագրված անձին մեկ այլ Ապահովագրված անձով և միևնույն ապահովագրության տեսակով փոխարինման անհրաժեշտությամբ, կամ,
- 9.17 Ապահովագրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել Ապահովագրի նախաձեռնությամբ Պայմանագրի/Վկայագրի դադարեցման դեպքում վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:
- 9.18 Այն դեպքում, երբ Ապահովագրողը տեղեկացված է ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքների մասին, որոնց ծագման հավանականությունը նախատեսված է ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով, ապա նա իրավունք ունի պահանջել ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համաչափ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում Ապահովագրի կողմից, ինչը ձևակերպվում է ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում լրացում և (կամ) փոփոխություն կատարելու մասին լրացուցիչ համաձայնագրով: Եթե Ապահովագրին առարկում է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարմանն ուղղված Ապահովագրողի պահանջին, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ լուծել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը:
- 9.19 Ապահովագրողն իրավունք չունի միակողմանի վաղաժամկետ լուծել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը, եթե ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքներն արդեն վերացել են:
- 9.20 Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի դրույթների փոփոխությունը կատարվում է Ապահովագրի և Ապահովագրողի երկկողմանի համաձայնությամբ՝ կողմերից մեկի դիմումի հիման վրա, և ձևակերպվում է լրացուցիչ համաձայնագրով, որը հանդիսանում է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը: Եթե

ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո ՀՀ-ում ընդունվում է այնպիսի օրենք, որով Կողմերի համար սահմանվում է կնքված ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված կանոններից տարբերվող պարտադիր այլ կանոններ, ապա կնքված ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված օրենքով սահմանվում է, որ դրա գործողությունը տարածվում է նաև մինչև տվյալ օրենքի ընդունելը ծագած իրավահարաբերությունների վրա:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ/ՎԿԱՅԱԳՐՈՎ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 Ապահովագրին իրավունք ունի՝

- 10.1.1 ընտրել ցանկացած համադրությամբ և բժշկական ու այլ ծառայությունների ընդգրկմամբ ապահովագրական ծրագրեր, ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ծառայություններ տրամադրող բժշկական և այլ հիմնարկություններ՝ Ապահովագրողի կողմից առաջարկված ցանկից և նրա հետ համաձայնեցնելով,
- 10.1.2 Ապահովագրողի հետ փոխադարձ համաձայնությամբ փոփոխել ապահովագրական ռիսկերի, ապահովագրական ծրագրերի, բժշկական և այլ հիմնարկությունների ցանկը, փոփոխել ապահովագրական ծրագրերը, ապահովագրական գումարի չափը՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ապահովագրավճարի վճարման պայմանով,
- 10.1.3 ապահովագրության Պայմանագրին/Վկայագրին կից լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով կատարել փոփոխություններ ապահովագրված անձանց ցանկում՝ Ապահովագրողին տրամադրելով անհրաժեշտ տեղեկություններ,
- 10.1.4 ապահովագրական քարտի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը,
- 10.1.5 Ապահովագրողին ուղղված գրավոր դիմումի հիման վրա ցանկացած ժամանակ հրաժարվել ապահովագրության Պայմանագրից/Վկայագրից, եթե Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հնարավորությունը չի դադարել ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքներով:

10.2 Ապահովագրիչը պարտավոր է՝

- 10.2.1 ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին,
- 10.2.2 ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս և նրա գործողության ընթացքում Ապահովագրողին տրամադրել ամբողջ տեղեկատվությունը ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման և կատարման, ինչպես նաև ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և նրա տեղի ունենալու դեպքում հնարավոր վնասների չափերի (ապահովագրական ռիսկի) որոշման հետ կապ ունեցող հանգամանքների մասին,
- 10.2.3 Ապահովագրված անձանց իրազեկել ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմանների, Պայմանների, ապահովագրական ծրագրերի, ինչպես նաև բժշկական և այլ ծառայությունների տրամադրման կարգի մասին,

վճարել ապահովագրավճարը (հերթական ապահովագրավճարը) ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված ծավալով և ժամկետներում,

10.2.5 ապահովել ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով փաստաթղթերի պահպանումը,

10.2.6 սեփական պատասխանատվության և իրավասության շրջանակներում կիրառել ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքները վերացնելուն ուղղված միջոցներ,

10.2.7 ապահովել Ապահովագրողի հետ հարաբերությունների գաղտնիությունը:

10.3 Ապահովագրողն իրավունք ունի՝

10.3.1 ստուգել Ապահովադրի (Ապահովագրված անձի) հաղորդած տեղեկատվության իսկությունը, ինչպես նաև Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից սույն Պայմանների և ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պահանջների և պայմանների կատարումը և մերժել ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքումը կամ պահանջել գործարքի անվավեր ճանաչում այն դեպքում, եթե Ապահովադիրը/Ապահովագրված անձը հաղորդել է ակնհայտ կեղծ տեղեկություններ,

10.3.2 մերժել նախնական բուժզննում, այդ թվում՝ ատամնաբուժական բուժզննում չանցած ապահովագրված անձանց ապահովագրական հատուցման վճարումը,

10.3.3 Ապահովագրված անձին ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված բժշկական և այլ հիմնարկներում բժշկական և այլ ծառայությունների տրամադրման հնարավորության բացակայության դեպքում կազմակերպել անհրաժեշտ և համապատասխան ծավալի ու որակի ծառայությունների տրամադրում այլ համապատասխան պրոֆիլի հիմնարկություններում, որոնք որոշվում են Ապահովագրողի հայեցողությամբ,

10.3.4 Պայմաններով նախատեսված դեպքերում միակողմանի վաղաժամ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը,

10.3.5 իրականացնել Պայմանագրով/Վկայագրով և Պայմաններով նախատեսված այլ իրավունքներ:

10.4 Ապահովագրողը պարտավոր է՝

10.4.1 ծանոթացնել Ապահովադրին ապահովագրության Պայմաններին,

10.4.2 ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովադրին հատկացնել ապահովագրության Պայմանագրեր /Վկայագրեր (ապահովագրական քարտեր, բժշկական և այլ հիմնարկությունների անցագրեր),

10.4.3 սահմանված կարգով կատարել ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի համաձայն ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում տրամադրված ծառայությունների վճարումը,

10.4.4 պահպանել ապահովագրական գաղտնիքը,

10.4.5 նշված ժամկետներում կազմակերպել նախնական բուժզննումներ:

10.5 Ապահովագրված անձն իրավունք ունի՝

10.5.1 ստանալ ծառայություններ ապահովագրական ծրագրի համաձայն,

10.5.2 ստանալ բացատրություններ սույն Պայմանների և ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմանների վերաբերյալ՝ բժշկական և այլ ծառայությունների տրամադրման կարգի մասին,

- 10.5.3 ապահովագրական ծրագրում նշվածներից ընտրել ցանկացած բժշկական և այլ հիմնարկություն,
- 10.5.4 հաղորդել Ապահովագրողին ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ծառայությունների չտրամադրման, ոչ լիարժեք կամ անորակ ծառայության տրամադրման մասին,
- 10.5.5 կորստի դեպքում ստանալ ապահովագրական քարտի կրկնօրինակը:
- 10.5.6 ապահովագրության ներկայացնել իր անմիջական ազգականներին (մինչև 65 տարեկան ամուսին/կին, մինչև 27 տարեկան չամուսնացած երեխաներ) իր ապահովագրության ուժի մեջ մտնելուց երկու ամսվա ընթացքում՝ ներկայացնելով համապատասխան գրավոր դիմում՝ կցելով իր անձնագրի պատճեն, ինչպես նաև ապահովագրության ներկայացվող անձի հետ իր բարեկամական կապը հաստատող փաստաթղթեր (անձնագիր, ամուսնության վկայական, ծննդյան վկայական, համատեղ բնակության վերաբերյալ տեղեկանք և Ապահովագրի պահանջով այլ փաստաթղթեր): Ընտանիքի անդամների ապահովագրության պայմանագրերը կարող են կնքվել ինչպես Ապահովագրի, այդպես էլ Ապահովագրված անձ հանդիսացող աշխատակիցների հետ անհատական հիմունքներով մինչև ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության ժամկետի ավարտը: Ապահովագրված անձ հանդիսացող աշխատակցի՝ աշխատանքից ազատվելու և ապահովագրությունը նրա նկատմամբ դադարելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի վերանայել նրա ընտանիքի անդամների ապահովագրության պայմանները, այդ թվում՝ վաղաժամկետ դադարեցնել այդ աշխատակցի հետ կնքած ընտանիքի անդամների ապահովագրության պայմանագրերը: Ապահովագրողի որոշմամբ ապահովագրված անձի կողմից ապահովագրությանը ներկայացվող ընտանիքի անդամների կազմի և տարիքային սահմանափակման վերաբերյալ կարող են սահմանվել այլ պայմաններ:
- 10.6 Ապահովագրված անձը պարտավոր է՝**
- 10.6.1 ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին,
- 10.6.2 հոգալ իր առողջության պահպանման մասին, կատարել ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ծառայությունների տրամադրման ընթացքում ստացված բուժող բժշկի ցուցումները, հոգալ ապահովագրական փաստաթղթերի պահպանման մասին և չփոխանցել դրանք այլ անձանց՝ վերջիններիս կողմից բժշկական և այլ ծառայություններ ստանալու նպատակով,
- 10.6.3 ժամանակին հաղորդել Ապահովագրողին իր անձնագրային տվյալների կամ բնակության (հաշվառման) վայրի փոփոխման մասին, իսկ չտրամադրելու դեպքում բացասական հետևանքները կրում է Ապահովագրված անձը,
- 10.6.4 Ապահովագրողին և/կամ նրա ներկայացուցչին իրավունք տալ ծանոթանալու ցանկացած բժշկական և այլ հիմնարկությունից ստացված բժշկական փաստաթղթերի հետ՝ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կատարման հետ կապված հարցերի լուծման համար,
- 10.6.5 ապահովել Ապահովագրողի հետ հարաբերությունների գաղտնիությունը,
- 10.6.6 Պայմանագիրը/Վկայագիրը կնքվելուց հետո սահմանված ժամկետում անցնել նախնական բժշկական զննություն և (կամ) լրացնել հարցաթերթիկը:
- 10.6.7 Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է ներառել նաև Կողմերի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ իրավունքներ և պարտականություններ:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 11.1 Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ծառայությունների ստացման համար, Ապահովագրված անձը պետք է դիմի ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նախատեսված բժշկական և/կամ այլ հիմնարկության՝ նախապես տեղեկացնելով Ապահովագրողին՝ նրա կողմից տրված հեռախոսահամարով կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կապի այլ միջոցներով:
- 11.2 Եթե Ապահովագրված անձը Ապահովագրողին տեղյակ չի պահում իր կողմից կատարվելիք ծախսերի մասին, ապա Ապահովագրողն ուսումնասիրում է կատարված վճարումների հիմնավորվածությունը և կատարված ծախսերի ողջամտությունը, որը որոշվում է Ապահովագրողի հետ համագործակցող բուժհաստատություններում գործող գների հետ համեմատության արդյունքում: Կատարված ծախսերի՝ հիշյալ գների միջին մեծությունից շեղումների առկայության դեպքում Ապահովագրողը կազմում է համապատասխան Եզրակացություն, որտեղ նշում է հատուցման ենթակա ծախսերի չափը՝ հիմք ընդունելով միջին գները, ինչը հետագայում հիմք է հանդիսանում ապահովագրական հատուցում կատարելու համար:
- 11.3 Ապահովագրված անձին բժշկական ծառայությունների տրամադրումն իրականացվում է նրա կողմից ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր (ապահովագրական քարտ) և անձը հաստատող փաստաթուղթ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բժշկական կամ այլ հիմնարկության անցագիր ներկայացնելուց հետո:
- 11.4 Ապահովագրողի հետ կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա բժշկական կենտրոնները, դեղատները և այլ հիմնարկությունները Ապահովագրված անձանց տրամադրում են ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով և ընտրված ծրագրերով նախատեսված ծառայություններ, ներառյալ՝ բժշկատրանսպորտային ծառայություններ:
- 11.5 Եթե Ապահովագրված անձը դիմում է Ապահովագրողի հետ չհամագործակցող բժշկական կենտրոններ, դեղատներ կամ այլ հիմնարկություններ, ապա նա պետք է նախապես համաձայնեցնի Ապահովագրողի հետ այդ հաստատություններում համապատասխան ծառայության համար սահմանված գները, իսկ չհամաձայնեցնելու դեպքում Ընկերությունը Ապահովագրված անձի կողմից կատարված ծախսերը կհատուցի համագործակցող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերում նշված գներով:
- 11.6 Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում կարող է նախատեսվել Ապահովագրողի (Ապահովագրված անձի) կրած բժշկական ծախսերի, ինչպես նաև Ապահովագրողի հետ համաձայնեցված և ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմաններին համապատասխան այլ ծառայությունների վճարման ծախսերի փոխհատուցում՝ անմիջականորեն Ապահովագրված անձին կանխիկ գումար վճարելու կամ նրա հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Ընդ որում, նշված ծախսերը Ապահովագրողի կողմից կճանաչվեն հիմնավորված՝ սույն Պայմանների 16.1 կետում նշված ծախսերի անհրաժեշտությունը և վճարման փաստը հաստատող փաստաթղթերի հիման վրա:
- 11.7 Ապահովագրողը ստուգում է ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում Ապահովագրված անձին տրամադրվող բժշկական ծառայությունների ծավալի համապատասխանությունը, ծառայությունների տրամադրման ժամկետները և ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի այլ դրույթների կատարումը:
- 11.8 Ապահովագրողի և (կամ) Ապահովագրված անձի կողմից ապահովագրական պատահարը և բժշկական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Ապահովագրողին պատահարի ամսաթվից ոչ ուշ, քան 3 (երեք) ամսվա ընթացքում:

100-420
Ապահովագրական պատահարից կախված՝ նշված ժամկետը կարող է երկարաձգվել: Նշանակված դեղորայքի դեղատոմսի ուղեգրերը կարող են ունենալ ոչ ավելի, քան 1 (մեկ) ամսվա վաղեմություն՝ նշանակման ամսաթվից սկսած:

- 11.9 Ապահովագրողի կողմից չեն հատուցվում այն ծախսերը, որոնք Ապահովադիրը (ապահովագրված Անձը) կրել է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- 12.1 Ապահովագրողը ազատվում է Ապահովադիրին /Ապահովագրված անձին/ տրամադրված բժշկական և այլ ծառայությունների դիմաց հատուցումից, եթե դրանք՝
12.1.1 նախատեսված չեն ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով/Ծրագրով/Փաթեթով,
12.1.2 իրենց բնույթով հանդիսանում են փորձարարական կամ հետազոտական,
12.1.3 Ապահովադիրը/Ապահովագրված անձը չի կատարել 10.6 կետի պահանջը,
12.1.4 Պայմանագրով/Վկայագրով և սույն Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:
- 12.2 Բոլոր դեպքերում Ապահովագրողը չի հատուցում բժշկական և/կամ այլ ծառայությունների համար, որոնք տրամադրվել են Ապահովագրված անձին իր ցանկությամբ, առանց բժշկի՝ նեղ մասնագետի, հիմնավորված ցուցումի:

13. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 13.1 Ապահովադիրը (Ապահովագրված անձը) գույքային պատասխանատվություն է կրում՝
13.1.1 Ապահովագրված անձի (Ապահովադիր) կողմից բժշկի, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության, ոչ բժշկական ցուցումներով սանիտարա-տրանսպորտային միջոցների չհիմնավորված կանչի համար, բուժման ռեժիմի խախտման, առանց նախնական ծանուցման բժշկական կամ այլ հիմնարկությունների հետ նախապես համաձայնեցված բուժական պրոցեդուրաներին, բժշկի ընդունելություններին և այլ ծառայություններին չներկայանալու դեպքերում: Ապահովագրված անձը (Ապահովադիրը) պարտավոր է փոխհատուցել դրա հետևանքով Ապահովագրողին պատճառված վնասները:
- 13.1.2 Բժշկի, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության բրիգադայի կանչը տուն, սանիտարա-տրանսպորտային միջոցների օգտագործումը համարվում է չհիմնավորված, եթե՝
13.1.2.1 կանչը իրականացվել է Ապահովադիր (Ապահովագրված անձի) կողմից ապահովագրված անձից բացի այլ անձին բուժական ծառայություն տրամադրելու համար,
13.1.2.2 Ապահովագրված անձի կամ նրա շահերից ելնելով գործող այլ անձի կողմից իրականացված կանչի ժամանակ միտումնավոր տրամադրվել է աղավաղված տեղեկատվություն՝ բժշկական սպասարկման անհրաժեշտության, բժշկական օգնության տրամադրման անհետաձգելիության (պլանային բժշկական և այլ ծառայություններ ստանալու նպատակով) և/կամ Ապահովագրված անձի գտնվելու վայրի վերաբերյալ,
13.1.2.3 կանչը իրականացվել է ոչ բժշկական նպատակներով:
- 13.2 Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական

գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև այլ կառավարության կողմից սահմանված սահմանափակումների և արգելքների, որը ծագել է ապահովագրության Պայմանագրով/Վկայագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

- 13.3 Այն դեպքում, երբ Պայմանների 13.2 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է Ապահովագրված անձի պարտականությունը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում, կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:
- 13.4 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 14.1 Ապահովագրված անձի վիճելի հայտերի հիմնավորվածությունը որոշվում է Ապահովագրողի, Ապահովադրի (Ապահովագրված անձի) և բժշկական հիմնարկության (ծառայողական ընկերության կամ այլ հիմնարկության) ներկայացուցիչներից կազմված փորձագիտական հանձնաժողովի կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անկախ փորձագիտական հանձնաժողովի կողմից:
- 14.2 Ապահովագրության Պայմանագրից/Վկայագրից ծագող վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ եթե վիճելի հարցի շուրջ Կողմերը չեն գալիս համաձայնության, ապա վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատարանի միջոցով:

15. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 15.1 Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են ներկայացվել հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք չունեն հիմնավորված բժշկական ցուցում կամ բժշկական ցուցումն ընդհանրապես բացակայում է:
- 15.2 Ապահովագրական դեպք չեն համարվում մինչև ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն:
- 15.3 Ապահովագրողը չի վճարում այն բժշկական ծառայությունների համար, որոնք կապված են հետևյալ հիվանդությունների և վիճակների կամ դրանց բարդությունների հետ՝
- 15.3.1 Քրոնիկ հիվանդություններ և/կամ տարիքային փոփոխություններ, որոնք պահանջում են մշտական, և/կամ պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն (սրտի իշեմիկ հիվանդություն, վիճակ ԱԿՇ-ից և կորոնար անոթների ստենտավորումից հետո, աթերոսկլերոզ, հիպերտոնիկ հիվանդություն, դիսցիրկուլյատոր էնցեֆալոպաթիա): Ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումներ, բուժում և նրանց բարդությունները, այդ թվում ճողվածքների

- բուժում և կամ վիրահատություն: Կեցվածքի խախտումներ, դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություններ, դեֆորմացնող օսթոարտրոզներ, և այլն:
- 15.3.2 Քրոնիկ հիվանդություններ և/կամ տարիքային փոփոխություններ՝ որոնց բուժումը հիվանդության թեթևացումն է, օրինակ՝ օստեոպենիա, օստեոպորոզ, բոլոր տեսակի կեցվածքի խանգառումներ և այլն: Պոչուկի էպիթելային ուղիներ և դրանց բարդությունները:
- 15.3.3 Լաբորատոր-գործիքային հետազոտություններ, որոնք ամրագրված չեն հետազա կլինիկական ախտորոշումով և հետազա բուժումով:
- 15.3.4 Բնածին հիվանդություններ և կամ վիճակներ, այդ թվում ներարգանդային զարգացման ընթացքում ձևավորվող արատներ և կամ անոմալիաներ, անատոմիական առանձնահատկություններ, դեֆորմացիաներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ:
- 15.3.5 Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի, թմրանյութի կամ տոքսիկ նյութերի օգտագործման հետևանքով և պատճառով, ալկոհոլային և թմրադեղային թունավորումներ:
- 15.3.6 Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքներ պատճառելու, ինքնասպանության փորձի հետևանքով առաջացած ծախսեր, հակաօրինական գործողությունների ժամանակ ստացված վնասվածքներ:
- 15.3.7 Հոգեկան հիվանդություններ, պսիխոպաթիա, պսիխոզ, սահմանային վիճակներ, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա: Ներոզների (ասթենո-ներոտիկ համախտանիշ, վեգետո-անոթային դիստոնիա, կաչուն վիճակներ և այլն) վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման (ներառյալ դիֆերենցիալ դիագնոստիկա) և բուժման ծախսեր: Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Խոսակցական արատի շտկում:
- 15.3.8 ՄԻԱՎ, ՁԻԱՀ, բոլոր տեսակի վիրուսային հեպատիտներ և դրանց բացահայտմանը ուղղված հատազոտությունները:
- 15.3.9 Լյարդի ցիռոզ: Արյան արտաերիկամային մաքրում պահանջող հիվանդություններ, ներառյալ քրոնիկ երիկամային անբավարարություն (պլազմոֆերեզ, հեմաբուրքցիա և այլն):
- 15.3.10 Արյան համակարգի ուռուցքային հիվանդություններ:
- 15.3.11 Պետական պատվերի ծրագրում ընդգրկված հիվանդություններ, իրավիճակներ (հեմոդիալիզ և դրան նախապատրաստում, տուբերկուլոզ և այլն), ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համավճարային սկզբունքով վճարվող ախտորոշումների դեպքում, միայն համավճարի չափով մասնակցություն:
- 15.3.12 Պլանային ինվազիվ հետազոտություններ և կամ միջամտություններ: Ռեկորոնարոգրաֆիա, ռեստենտավորում: Լուծվող ստենտի ձեռք բերում և տեղադրում: Պերիֆերիկ և գլխուղեղը սնուցող անոթների ինվազիվ հետազոտություններ և կամ միջամտություններ: Սրտի փականային համակարգի վիրաբուժական բուժում և կամ պրոթեզավորում, ներառյալ պրոթեզի ձեռք բերման ծախսերը:
- 15.3.13 Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ:
- 15.3.14 Էնդոկրինոպաթիաների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման (ներառյալ լաբորատոր-գործիքային և դիֆերենցիալ դիագնոստիկա) և բուժման ծախսեր: Շաքարային դիաբետ (I և II տիպ) և դրա բարդություններ:
- 15.3.15 Կատարակտա, ներառյալ նախապատրաստական բժշկական ծառայությունները:

- 15.3.16 Էպիլեպսիա, դրա հետևանքները և բարդությունները: Պարբերական հիվանդություն, դրա հետևանքները և բարդությունները:
- 15.3.17 Օստեոպորոզ, ճարպակալում, մետաբոլիկ համախտանիշ, հոդատապ /պոդագրա:
- 15.3.18 Ալլերգոդիագնոստիկա, սկարիֆիկացիոն փորձեր: Համակարգային և աուտոիմուն հիվանդությունները, այդ թվում ռևմատոիդ արթրիտ, Ռեյնոյի համախտանիշ, համակարգային կարմիր գալախտ, համակարգային սկլերոդերմիա, Բեխտերևի հիվանդություն, համակարգային վասկուլիտներ, և այլն:
- 15.3.19 Թոքերի քրոնիկ ոչ յուրահատուկ հիվանդություններ՝ թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ, բրոնխոէկտատիկ հիվանդություն, դիֆուզ քրոնիկ բրոնխիտ:
- 15.3.20 Մուկովիսցիդոզ, էլզեմա, պսորիազ, սեբորեա, գունափոփոխ որքին, մաշկի և եղունգների (օնիխոմիկոզներ) սնկային ախտահարում: Բացիլակրություն, պարազիտակրություն, ճիճվակրություն, դիսբակտերիոզ:
- 15.3.21 Միզասեռական վարակներ, առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (խլամիդիա, ցիտոմեգալովիրուս, հերպես վիրուս, ուրեոպլազմա, պապիլոմա վիրուս, գոնորեա, սիֆիլիս), բակտերիալ վագինոզ (գարդներեյոզ), սեռական օրգանների սնկային հիվանդություններ:
- 15.4 Ապահովագրողը չի վճարում հետևյալ ծառայությունների համար՝
- 15.4.1 Տնային պայմաններում իրականացված խնամք և բժշկական ծառայություններ, եթե դրանք իրականացվել են առանց բժշկական ցուցման:
- 15.4.2 Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը:
- 15.4.3 Այլընտրանքային և փորձարարական բժշկության մեթոդներ՝ իրիդոդիագնոստիկա, աուրիկուլո-դիագնոստիկա, բիոռեզոնանսային ախտորոշում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, էներգիինֆորմատիկա, ցուրտ-թերապիա, էլեկտրաասեղնաբուժություն, հիրուդո-թերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլի մեթոդով և այլն:
- 15.4.4 Բոլոր տեսակների կանխարգելիչ բժշկական ծառայություններ, այդ թվում թերապևտիկ և վիրաբուժական: Կազդուրողական միջոցառումներ (ջրային պրոցեդուրաներ, ցեխաբուժություն, սոլյարի, սանատոր-կուրորտային բուժում, մարզասարքեր, արևաբուժարան, սաունա, սոլյարի և այլն), կոսմետիկ միջոցառումներ, աղիների մոնիթորինգային մաքրում, պլազմոֆերեզ, օզոնոթերապիա, հեմոսորբցիա, հիպերբարիկ օքսիգենացում, լազերային թերապիա, մանուալ թերապիա և այլն:
- 15.4.5 Բուժում և պրոցեդուրաներ, որոնք անցկացվում են էսթետիկ կամ կոսմետիկ նպատակով կամ Ապահովագրվածի հոգեբանական վիճակը բարելավելու նպատակով, այդ թվում՝ մաշկի հիվանդությունների կապակցությամբ (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ, խալեր, կոնդիլոմաներ, լիպոմաների և աթերոմաների վիրաբուժական բուժում ոչ սրացման փուլում, սպիներ, մազաթափություն, ակնե և այլն): Տեսողության դեղորայքային և վիրաբուժական (էքսիմեր) շտկում, քրոսլինքինգ: Քաշի դեղորայքային և վիրաբուժական շտկում:
- 15.4.6 Ատամնաբուժական օրթոպեդիա, օրթոդոնտիա և իմպլանտոլոգիա; օրթոպեդիկ կոնստրուկցիաների տակ գտնվող ատամների բուժման ծախսերը; էսթետիկ բուժման, փորձարարական մեթոդների և կոսմետիկ ատամնաբուժության ծախսերը:

- 15.4.7 Պլաստիկ և վերականգնողական վիրաբուժական և/կամ կոնսերվատիվ բուժում, պրոթեզավորում և էնդոպրոտեզավորում ներառյալ պրոթեզներ և էնդոպրոթեզներ, բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարների հետևանքով առաջացած դեպքերի:
- 15.4.8 Օնկոլոգիական հիվանդությունների ամբուլատոր (հետվիրահատական) բուժում և հսկողություն:
- 15.4.9 Քթի միջնապատի դեֆորմացիաները և դրա հետևանքները, մինչև վիրահատական և հետվիրահատական բարդությունների և/կամ բարդացումների վիրահատական և/կամ կոնսերվատիվ բուժում (բացառությամբ այն դեպքերի, եթե դրանք անհրաժեշտ են Ապահովագրության գործողության ժամկետում տեղի ունեցած և Պայմանագրով նախատեսված դժբախտ պատահարի արդյունքում և կատարվում են վնասված օրգանի ֆունկցիոնալ վերականգնման նպատակով): Ընդ որում դժբախտ պատահարը պետք է տեղի ունենա սույն պայմանագրի գործողության ընթացքում և ունենա համապատասխան փաստաթղթային ապացույց, տրված համապատասխան լիազորված մարմնի կողմից (Ոստիկանություն և այլն): Սույնով դժբախտ պատահար է համարվում Ապահովագրված անձի կամքից դուրս տեղի ունեցած արտաքին, հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ) իրադարձություն (դեպք), որի հետևանքով պատճառվել է մարմնական վնասվածք:
- 15.4.10 Բժշկական սարքավորումներ (սրտի ռիթմավար սարքերի վերատեղադրում, լսողական սարքեր, հաշմանդամային սայլակներ, սփեյսերներ, օրթոպեդիկ ներդիրներ և այլն):
- 15.4.11 Ռեպրոդուկտիվ (վերարտադրողական) ֆունկցիայի և էրեկտիլ դիսֆունկցիայի (իմպոտենցիա) հետ կապված հետազոտությունները և բուժումը, ներարգանդային սերմնավորումը և էքստրակորպորալ բեղմնավորումը, հակաբեղմնավորիչ կոնսերվատիվ միջամտությունները, այդ թվում՝ ՆԱՊ-ի տեղադրումը և հեռացումը, սեռական հորմոնալ դիսֆունկցիան, դաշտանային ցիկլի խանգարումներ, հակաբեղմնավորիչ միջոցները,
- 15.4.12 Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում, արտերկիր մեկնելու համար անհրաժեշտ պատվաստումների իրականացում:
- 15.4.13 Կենսաակտիվ սննդային հավելումներ, բժշկական սննդային խառնուրդներ, վիտամիններ, պարաֆարմացեվտիկ, կոսմետիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր, հիգիենայի պարագաներ:
- 15.4.14 ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից հաստատված դեղերի պետական գրանցամատյանում չընդգրկված (չարտոնագրված) դեղորայք և կամ դեղամիջոցներ:
- 15.4.15 Քնի խանգարումներ (այդ թվում հետազոտությունները և բուժումը):
- 15.4.16 Ցանկացած բժշկական ծառայություն, որն ընդգրկված չէ Ծրագրում:
- 15.5 Հատուցման ենթակա չեն անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) հետևանքով և (կամ) դրանց պատճառով առաջացած հիվանդությունների և վիճակների հետ կապված ծախսերը, ինչպես նաև՝
- 15.5.1 Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բժավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա,

Մարբուրգ), ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել /հայտարարվել են համաճարակների օջախներ

- 15.5.2 Ահաբեկչական ակտեր, միջուկային պայթյուն, ճառագայթում, ռադիոակտիվ կամ քիմիական վարակ, պատերազմ ռազմական գործողություններ, ռազմական վարժանք, քաղաքացիական պատերազմ, ամեն տեսակի հասարակական հուզումներ կամ գործադուլներ, օրենքով նախատեսված այլ դեպքեր:
- 15.5.3 Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս (արտասահմանում) բուժման համար կատարված ծախսերը, եթե ՀՀ և ԱՀ տարածքներում տվյալ հիվանդության բուժումը կամ բուժման մեթոդները չեն իրականացվում:

16. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ

- 16.1 Բժշկական ծառայությունների կազմակերպման և վճարման համար (բացառությամբ շտապ և անհետաձգելի բուժօգնության դեպքերի) Ապահովագրված անձը պետք է նախօրոք անմիջապես և անհապաղ տեղեկացնի Ապահովագրողին՝ զանգահարելով Պայմանագրում նշված հեռախոսահամարներով և տեղեկացնի Ապահովագրողի Կոորդինացիոն կենտրոնի աշխատակցին բժշկական ծառայությունների անցկացման անհրաժեշտության և/կամ հիմնավորված նպատակահարմարության առկայության մասին: Վերոնշյալ ժամկետում Ապահովագրողին չտեղեկացնելու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է գրավոր հիմնավորել ուշ տեղեկացնելու պատճառը: Ուշ տեղեկացումը հիմք չի հանդիսանում հատուցման մերժման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի ունեցած պատահարի կամ դեպքի կամ իրադարձության մասին տեղեկությունների բացակայությունը կարող էր ազդել Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցման տրամադրման հետ կապված պարտավորությունների պատշաճ իրականացման վրա:
- 16.2 Ապահովագրված անձը հաղորդում է.
 - 16.2.1 իր անունը, ազգանունը և Պայմանագրի համարը,
 - 16.2.2 պատահարի մանրամասները և նշում, թե կոնկրետ ինչպիսի ծառայությունների կարիք ունի:
- 16.3 Հնարավոր ապահովագրական պատահարի մասին տեղեկանալուց հետո, Կոորդինացիոն կենտրոնի աշխատակիցը գրանցում է կատարում դեպքի մասին և կապ հաստատում տարածքի բժիշկ-կոորդինատորի հետ (մարզերից հայցի դեպքում) կամ բժիշկ-խորհրդատուի հետ (Երևան քաղաքից հայցի դեպքում) և ներկայացնում է հայցի բովանդակությունն ու հայցը ներկայացնող անձի կոնտակտային տվյալները:
- 16.4 Անհրաժեշտության դեպքում Կոորդինացիոն կենտրոնի աշխատակիցը կազմակերպում է խորհրդատվություն (կոնսուլտացիա) համապատասխան բժիշկ-մասնագետի հետ: Մինչ այդ հայցը ներկայացնող անձի հետ կարող է կապ հաստատել նաև Ապահովագրողի բժիշկ-խորհրդատուն, նման անհրաժեշտության առկայության դեպքում:
- 16.5 Եթե դեպքը կամ իրադարձությունը համապատասխանում է Ծրագրին, ապա բժիշկ-կոորդինատորը/բժիշկ-խորհրդատուն տալիս է համաձայնություն տվյալ բժշկական վիճակի համար անհրաժեշտ հետազոտությունների անցկացմանը:
- 16.6 Եթե Ապահովագրված անձի վիճակը ենթադրում է բուժում ամբուլատոր պայմաններում, ապա Ապահովագրված անձը բուժումը անցնում է տվյալ տարածաշրջանի ամբուլատոր հաստատություններում (գործում է միայն Հավելված 2-ում նշված Ծրագիրն ունենալու դեպքում):

- 16.7 Եթե բուժումն անհրաժեշտ է անցկացնել հիվանդանոցային, ստացիոնար պայմաններում, ապա Ապահովագրված անձին առաջարկվում է օգտվել կա'մ մարզային, կա'մ Երևան քաղաքում գործող հիվանդանոցների ծառայություններից:
- 16.8 Շտապ, անհետաձգելի բուժօգնություն ստանալու կամ հրատապ հոսպիտալացման անհրաժեշտության դեպքում Ապահովագրված անձը կամ նրա շահերից գործող անձը պետք է դիմի տվյալ շրջանի շտապ բուժօգնության ծառայություն:
- 16.9 Առաջին իսկ հնարավորության դեպքում և բուժօգնության կազմակերպման և ցուցաբերման որակի հսկողությունը իրականացնելու նպատակով Ապահովագրված անձը կամ նրա շահերից գործող անձը պետք է տեղեկացնի պատահածի մասին Ապահովագրողի Կոորդինացիոն կենտրոնին:
- 16.10 Ապահովագրողը որևէ պատասխանատվություն չի կրում բժշկական հաստատությունների կամ մասնավոր/անհատ բժիշկների կողմից մատուցված ծառայությունների որակի, ամբողջականության և դրանց հետևանքների համար:
- 16.11 Ապահովագրողն ուսումնասիրում է կատարված վճարումների հիմնավորվածությունը և կատարված ծախսերի ողջամտությունը՝ համեմատելով տվյալ ծառայությունների համար նախատեսված միջին ողջամիտ գների հետ: Պաշտոնապես սահմանված միասնական գնացուցակի բացակայության դեպքում կատարված ծախսերի ողջամտությունը որոշվում է Ապահովագրողի հետ համագործակցող բժշկական հիմնարկություններում գործող գների հետ համեմատության արդյունքում: Կատարված ծախսերի՝ հիշյալ գների միջին մեծությունից շեղումների առկայության դեպքում Ապահովագրողը կազմում է համապատասխան եզրակացություն, որտեղ նշում է հատուցման ենթակա ծախսերի չափը՝ հիմք ընդունելով միջին գները, ինչը հետագայում հիմք է հանդիսանում ապահովագրական հատուցում կատարելու համար:

17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 17.1 Ապահովագրական հատուցման/մերժման վերաբերյալ որոշում կայացնելու համար Ապահովագրված անձը պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
- 17.1.1 հայցային դիմում
- 17.1.2 համապատասխան բուժ. հաստատության կնիքով վավերացված բժշկական հիմնավորում՝
- 17.1.2.1 էպիկրիզ, և/կամ
- 17.1.2.2 քաղվածք ամբուլատոր-բժշկական քարտից, և/կամ
- 17.1.2.3 բժշկի կոնսուլտացիոն եզրակացություն, և/կամ
- 17.1.2.4 բուժ. հաստատության կողմից տրված տեղեկանք
- 17.1.2.5 պարակլինիկական հետազոտությունների պատասխանների պատճենները (անհրաժեշտության դեպքում):
- 17.1.3 վնասի չափը հաստատող ֆինանսական փաստաթղթեր՝
- 17.1.3.1 ՀԴՄ կտրոն և/կամ
- 17.1.3.2 մուտքի օրդերի անդորրագիր, և/կամ
- 17.1.3.3 հաշիվ-պահանջագիր, և/կամ
- 17.1.3.4 բուժհաստատության կողմից համապատասխան ձևաթղթի վրա տրված տեղեկանք, որը հաստատված է բուժհաստատության կողմից և հավաստում է բժշկական ծախսի չափը:
- 17.1.4 համապատասխան լիազորված մարմնի եզրակացություն (Ոստիկանություն, հրշեջ ծառայություն և այլն) դժբախտ պատահարի դեպքում:

- 17.2 Վերը նշված փաստաթղթերը ենթակա են ներկայացման Ապահովագրողին պատահարի ամսաթվից ոչ ուշ քան 3 (երեք) ամսվա ընթացքում: Ապահովագրական պատահարից կախված՝ նշված ժամկետը կարող է երկարաձգվել:
- 17.3 Նշանակված դեղորայքի դեղատոմսի ուղեգրերը կարող են ունենալ ոչ ավելի քան 1 (մեկ) ամսվա վաղեմություն՝ նշանակման ամսաթվից սկսած:
- 17.4 Ապահովագրողն իրավունք ունի լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտության որոշում ընդունել՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից և վնասի չափից:
- 17.5 Պայմանների 17.2 և 17.3 կետերում նշված պահանջները չբավարարելու, ինչպես նաև 17.1.1– 17.1.4 կետերում թվարկված փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը կամ նվազեցնել այն:
- 17.6 Հայցային դիմումի ձևը տրամադրվում է Ապահովագրված անձին Ապահովագրողի Կոորդինացիոն Կենտրոնի աշխատակցի կողմից կամ ներբեռնվում է Ընկերության կայքից՝ www.silinsurance.am:
- 17.7 Հայցային դիմումը ու բոլոր պահանջվող փաստաթղթերը Ապահովագրողի և/կամ լիազորված մարմինների կողմից ստանալու օրվանից հետո Ապահովագրողը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել ապահովագրական հատուցման վճարման կամ մերժման մասին: Ապահովագրողը հայցի կարգավորման մասին որոշում է ընդունում՝ կազմելով այդ մասին համապատասխան որոշում:
- 17.8 Ապահովագրական հատուցում վճարելու որոշում ընդունելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է հայցի կարգավորման վերաբերյալ որոշման ընդունման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում կատարել հատուցման վճարումը:
- 17.9 Այն դեպքերում, երբ ապահովագրական պատահարի առկայությունը հավանական է, և որոշակի հանգամանքներում անհրաժեշտ է շտապ տրամադրել նախնական հատուցման գումար բժշկական հաստատությանը, Ապահովագրողն իրականացնում է համապատասխան չափով անհրաժեշտ ապահովագրական հատուցում կանխավճարի տեսքով՝ մինչև վերջնական փաստաթղթերի ներկայացումը: Ցանկացած հիմքով ապահովագրական հատուցումը մերժելու դեպքում Ապահովագրված անձը և Ապահովագրողը (եթե Ապահովագրված անձ չէ), պարտավոր են համապարտության կարգով 10 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կողմից բժշկական հաստատությանը վճարված նախնական հատուցման գումարները (կանխավճարը):
- 17.10 Ապահովագրական ընկերությունը իրավունք ունի հատուցումը իրականացնել անմիջապես Ապահովագրված անձին կամ բժշկական հաստատությանը՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

Ապահովագրված անձն ազատվում է 17.1.2 և 17.1.3 կետերով սահմանված փաստաթղթերի ներկայացման պարտականությունից Ապահովագրողի գործընկեր համարվող բուժ. կենտրոն դիմելիս:

ԳՆՈՐԴ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի
իրականացման մասնաճյուղ»
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900000902255

Կենտրոնական գանձապետարան

Տնօրեն

Մամիկոն Գասպարյան



ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5

ՀՎՀՀ՝ 02551341

Հ/Հ՝ 163008157113

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ



Պայմանագրի կնքման պահին ապահովագրված անձանց ցուցակ

#	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Ծնունդ օր/ամիս/տարեթիվ	Անձնագիր սերիա	Տրված	Ում կողմից	Սոց. քարտ	Հասցե	Հեռախոս	Սեռ
1	Մամիկոն	Գասպարյան	Տիգրանի	18.02.1966	006636054	16.12.2015թ.	011	N 2802660101	ք.Յերևան, Սարյան փողոց 42/89 բնակարան	091-40-56-52	արական
2	Լուսինե	Աբրահամյան	Աշոտի	14.03.1982	AN 0527930	20.06.2013թ.	011	N 6403820044	ք.Յերևան, Փարպեցու փողոց 9/բ շենք 15	041-11-13-89	իգական
3	Անահիտ	Կարսյան	Արմանի	02.12.1996	AN 0582438	23.07.2013թ.	013	N 5212960428	ք.Յերևան, Դավթաշեն 2-րդ թաղամասի 27	093-17-13-88	իգական
4	Դավիթ	Զաքարյան	Բենիամինի	04.01.1990	AR0451131	08.09.2017թ.	005	N 1401900062	ք.Յերևան, Գյուլիսեյան փողոց 35-րդ շենք	095-49-94-44	արական
5	Լևոն	Որսկանյան	Սամսոնի	06.04.1989	BA 3421953	05.11.2018թ.	019	N 1604890630	ք.Յերևան, Ջրվեժ 43 փողոց, 64 տուն	043-33-33-20	արական
6	Վարդապետ	Մկրտչյան	Արայիկի	03.08.1983	AS 0471816	17.01.2019թ.	001	N 1308830505	ՀՀ Արարատի մարզ, Բերքանուշ գյուղ,	041-41-41-22	արական
7	Վարդան	Մելքոնյան	Գառնիկի	05.10.1961	BA 1426299	04.03.2015թ.	004	N 1510610375	ք.Յերևան, Բարբյուրի 67 բնակարան 3	099-20-42-15	արական
8	Մարինե	Վարդանյան	Նորայրի	02.12.1996	AM 0267692	18.04.2011թ.	004	N 5212660198	ք.Յերևան, Բաղրամյանի պողոտա 21-րդ շենք	094-58-88-30	իգական
9	Մարտիրոս	Նալբանդյան	Կառլենի	08.01.1979	BA 2908615	02.04.2016թ.	043	N 1801790221	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Գողահովիտ 4	098-13-14-71	արական
10	Սոնա	Գևորգյան	Իշխանի	22.06.1980	AK 0687887	17.01.2011թ.	008	N 7214800284	ք.Յերևան, Բաբաջանյան 21-րդ շենք	041-11-13-76	իգական
11	Շահանե	Արսենյան	Հայկի	27.02.1980	AM 0389204	22.07.2011թ.	011	N 7702800334	ք.Յերևան, Դավթաշեն 4-րդ թաղամասի 39-	055-17-13-35	իգական
12	Կարինե	Փոլադյան	Արշավիրի	06.09.1971	000424846	24.10.2013թ.	004	N 5609710049	ք.Յերևան, ՎՃՀամբարձումյան 1,բնՊ17	091-31-97-02	իգական
13	Անահիտ	Թարևոսյան	Ժուլիկի	10.04.1973	006504864	20.09.2016թ.	006	N 6004730270	ք.Յերևան, Ավան վարչկենտրոնի 1-ին փողոց	055-73-10-04	իգական
14	Սամվել	Կարապետյան	Ռաֆիկի	27.05.1954	AP 0539632	18.08.2016թ.	008	N 3705540114	ք.Յերևան, Անդրանիկի 93-րդ շենքի	093-70-99-39	արական
15	Հովսեփ	Զարգարյան	Հրանտի	24.05.1982	001379668	08.01.2013թ.	004	N 3405820499	Տավուշի մարզ, գյուղ Արծվաբերդ 1-ին փողոց	094-63-06-00	արական
16	Հասմիկ	Կիրակոսյան	Նորիկի	20.12.1957	AM 0272279	20.04.2011թ.	008	N 7012570444	ք.Յերևան, Լենինգրադյան փողոց 31-րդ շենք	041-11-15-71	իգական
17	Լիլիթ	Պետրոսյան	Ստյոպայի	08.11.1980	AM 0763273	08.06.2012թ.	004	N 5811800728	ք. Երևան, Սունդուկյան փողոց 15/4-րդ	094-98-15-98	իգական
18	Կարեն	Դարոյան	Իվանի	12.05.1958	006816383	27.04.2016թ.	058	N 2205580205	ք.Յերևան, Դավթաշեն 10-րդ փողոց 2/18	041-41-71-41	արական
19	Մարգարետ	Տոնոյան	Տիգրանի	26.10.1943	BA0107920	16.04.2014թ.	012	N 3610430044	ք.Յերևան, Վշտունու 4-րդ նրբանցք 20-րդ	041-11-14-05	արական
20	Արմեն	Եփրեմյան	Սուրենի	26.02.1962	005871652	05.04.2017թ.	013	N 3602620264	ք.Յերևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս	041-11-14-30	արական
21	Արա	Օհանյան	Յուլիկի	20.06.1959	AR 0552554	11.01.2018թ.	019	N 3014590398	Կոտայքի մարզ, Գառնի 2-րդ թաղամասի 1-ին	041-11-15-41	արական
22	Զախար	Իսախանյան	Անուշավանի	07.11.1961	AN 0764150	17.12.2013թ.	013	N 1711610194	ք.Յերևան, Դավթաշեն 1-ին թաղամաս 15 շենք	055-55-79-01	արական
23	Վարդան	Խոսրոսյան	Վարդգեսի	02.12.1952	AM 0259727	08.04.2011թ.	004	N 1212520092	ք. Երևան, Փափագյան փողոց 23/1-ին	091-41-30-84	արական
24	Հովհաննես	Գասպարյան	Անուշավանի	22.02.1973	AM 0440842	07.09.2011թ.	001	N 3202730037	Արմավիրի մարզ, Խանջյան 14-րդ փողոց 6-րդ	055-55-78-22	արական
25	Գևորգ	Գրիգորյան	Գագիկի	13.02.1981	AN 0386986	26.02.2013թ.	027	N 2302810082	Հասցե ք.Յերևան, Արշակունյաց պողոտա	099-99-19-88	արական
26	Հայկ	Շահնազարյան	Արսենի	06.01.1987	10399848	21.03.2019թ.	005	N 1601870574	ք.Յերևան, Նոր Նորքի 1-ին զանգված	041-41-81-41	արական
27	Նարինե	Բեդյան	Ալեքսանդրի	23.08.1976	AM 0908810	18.10.2012թ.	005	N 7308760332	ք.Յերևան, Լևոնյան փողոց 11-րդ շենք 47-րդ	055-62-72-37	իգական
28	Նարինե	Կարապետյան	Լևոնի	27.10.1961	AP 0567590	15.08.2016թ.	008	N 7710610285	ք.Յերևան, Անդրանիկի 93-րդ շենքի 40-րդ	077-00-80-20	իգական
29	Վարդուհի	Նազարյան	Վարդապետի	11.03.1963	AN 0256123	12.11.2012թ.	008	N 6103630088	ք.Յերևան, Մալաթիա փողոց 94/4-րդ տուն	093-35-55-71	իգական
30	Սերինե	Մանուկյան	Գեղամի	19.11.1986	AR 0611774	01.03.2018թ.	004	N 6911860369	ք.Յերևան, Քանաքեռ շրջանի 1/2 տուն	055-55-78-78	իգական
31	Արտաշես	Սեյանյան	Գարեգինի	25.04.1972	012696126	23.05.2020թ.	058	N 3504720131	ք.Յերևան, Գարեգին Նժդեհի փողոց	095-50-09-65	արական
32	Մարգարիտա	Սարգսյան	Բորիսի	07.02.1969	005794342	29.03.2017թ.	012	N 5702690176	ք.Յերևան, Էստոնական փողոց 9-րդ շենք 15-	041-11-14-35	իգական
33	Դմիտրի	Գրիգորյան	Արտավազի	29.11.1941	004513404	27.06.2014թ.	011	N 3911410093	ք.Յերևան, Վարդանանց 5ա,130 բնակարան	041-41-41-51	արական
34	Ժենյա	Խաչատրյան	Գագիկի	16.04.1987	AP 0462527	29.06.2016թ.	004	N 6604870421	ք.Յերևան, Արաբկիրի 47-րդ փողոց	091-48-23-30	իգական
35	Գագիկ	Արզումանյան	Տոնիկի	23.09.1960	AM 0552660	07.12.2011թ.	005	N 3309600408	ք.Յերևան, Գալստյան փողոց, 38-րդ շենքի	095-13-00-06	արական
36	Գրիգոր	Հարությունյան	Մերուժանի	20.03.1992	AR 0565020	23.01.2018թ.	005	N 3003920804	ք.Յերևան, Գյուլիսեյան 31 շենք 28բն	094-42-49-45	արական
37	Վարդան	Խաչատրյան	Հայկի	02.08.1989	AG 0655581	21.03.2006թ.	008	N 1208890069	ք.Յերևան, Շահումյան 4-րդ փողոց 26 տուն	077-72-13-72	արական
38	Ռազմիկ	Կոստանյան	Արթուրի	21.11.1984	AP 0511237	16.09.2016թ.	055	N 3111840212	Լոռու մարզ, գյուղ Օձուն 5-րդ փողոց, 1-ին	099-32-92-12	արական
39	Կարինե	Հակոբյան	Սարգսի	18.01.1963	AM 0887731	02.10.2012թ.	008	N 6801630261	ք.Յերևան, Անդրանիկի փողոց 93-րդ շենքի 45-	091-72-24-31	իգական
40	Մարտին	Զարյան	Սուրենի	05.02.1972	BA3098801	09.03.2017թ.	011	N1502720299	ք. Երևան, Ղազար Փարպեցի 24, բն. 13	093-52-36-52	արական
41	Գուրգեն	Մացոյան	Ռաֆիկի	05.12.1972	012696100	23.05.2020թ.	058	N 1512720178	ք. Երևան, Մաշտոցի պ., շ. 34, բն. 13	091-50-02-74	արական
42	Գայանե	Քարինյան	Սարգսի	17.02.1977	AT0536116	06.08.2020թ.	010	N6702770435	մ. Արմավիր, գ. Հայկավան, 30փ., տ. 22	093-90-50-91	իգական

ԳՆՈՐԴ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի
իրականացման մասնաճյուղ»
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900000902255

Կենտրոնական գանձապետարան

Տնօրեն

Մամիկոն Գասպարյան



ՎԱՃԱՌՈՂ

ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5

ՀՎՀՀ՝ 02551341

Հ/Հ՝ 163008157113

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ

